

«Հարկային տեղեկատու» պարբերականը նախաձեռնել է հրապարակել նաև առանձին հարկատեսակներին, պարտադիր սոցիալական ապահովության վճարներին և այլ պարտադիր վճարներին վերաբերվող՝ հարկային մարմնի ղեկավարի և այլ իրավասու պետական կառավարման մարմինների ղեկավարների հրամաններով հաստատված հրահանգների, կարգերի, հրահանգչական նամակների, ինչպես նաև պաշտոնական պարզաբանումների ամփոփ ժողովածուն: Ժողովածուի առաջին մասում ներառված են՝

- շահութահարկին,
- եկամտահարկին,
- հողի հարկին և գույքահարկին
- պարտադիր սոցիալական ապահովության վճարներին,
- եկամուտների և գույքի հայտարարագրմանը
- արտոնագրային վճարներին
- արժույթային կարգավորմանը և արժույթային վերահսկողությանը

վերաբերվող՝ ինչպես հարկային մարմնի ղեկավարի, այնպես էլ այլ իրավասու պետական կառավարման մարմինների ղեկավարների կողմից ընդունված և 2010 թվականի հունվարի 1-ի դրությամբ գործող հրահանգները, հրահանգչական նամակները և պաշտոնական պարզաբանումները:

Ժողովածուի մյուս մասերում կընդգրկվեն նաև ավելացված արժեքի հարկին, ակցիզային հարկին, հաստատագրված վճարներին և մյուս այլ պարտադիր վճարներին վերաբերվող հրահանգները, կարգերը, հրահանգչական նամակները և պաշտոնական պարզաբանումները: